

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

DEGHEGADOU

ديجيجادو

Հաստատված է Գոմթեթ ԸԳԸԸԻ

نشرة جمعية القادسية للتربية الامة العامة

5 ՌԴ ՂԱՐՈՒՆ Ս. ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՅԻ ԱՏԵՂԾԱԾ
ՀԱՅ ՏԱՌԵՐՈՒՆ ԿՐԱԾ ԶԵԿՓՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՂԱՐԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՍԲԱԳԻՐ
Արաքսի Տեղաբնակ

Հայաստանը Անկախ, Իսկ Մե՞ք 1

ԳԵՂԱՐՈՒԻՏՍԱԿԱՆ
ՁԵԼԱԴՐՈՐԻՄ
ՇԱՀԷ ԼՈՒԱՐԱՐԵԱՆ

**Քիչ Մը Նախանձախնդրություն Հայ Գիրին,
Լեզուին Ու Աւանդություններուն Նկատմամբ** 2
Արաքսի Տեղաբնակ

ՀԱՍՎԱՐԳՉԱՅԻՆ
ՇԱՐՈՒԾՔ
Անի Պողոսեան

**Հարցազրոյց
Տէր Ձեռնոն Քահանայ Բարսեղեանի Հետ** 3
Հարի ՉԷջճէնեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing House

ՄԷկ հազարամեակ, ՄԷկ Դուռ եւ Երեք Հայ 4
Արաքսի Տեղաբնակ

**Նախամուսնական Կենակցությունը
Երիտասարդներուն Մօտ** 8
Անդրանիկ Ծ. Վ. Կռանեան

**ՀԲԸՄ - Գահիրէ
Համալսարանական Երիտասարդական Շարժում** 12
Անի Պողոսեան

**ՀՍԸՄ ՆՈՒՊԱՐ - Աղեքսանդրիա
Յոբելինական Հանդիսություն** 13
Ն. Գարթալեան

**ՀՍԸՄ ՆՈՒՊԱՐ - Հելիոպոլիս
Սկառուտական Բանակում** 14
Անի Օհաննեսեան

Միջակումբային Պասքէթ Պոլի Մրցաշարք 15
Ճ. Ս.

Գրիչ, Մա-աղաթ, Գրչություն 17

Հայաստան 18

Նոր Հրատարակություն 19

Անդամական 20

Թի 29 Նոր Շրջան
Նոյեմբեր 2003



ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԿԱԽ, ԻՍԿ ՄԵՆՔ

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը իր 23 Սեպտեմբեր 1991 թուականի թիվին առաջին էջին վրայ, Հայաստանի անկախացման առիթով, ի միջի այլոց կը գրեր հետևեալը:

«Հայկով ձեռք բերուած, Տիգրանով, Արշակով ու Աւարայրով հաստատուած, ասպատակութիւններով ու Եաթաղանով կորսուած, Սարդարապատով վերահաստատուած, Լենինի շանադրութեամբ դարձեալ կորսուած, յետոյ՝ Եօթանասուն տարի փայփայուած, խնամուած, բանտուած, շղթայուած, աքսորուած, սրճարանային վեճերում, խօսք գրոյցներում հազար անգամ հազար կողմից տընտղուած, Ազատութեան հրապարակում հազարբերան հնչած ու հազար այլք Հայաստանով մէկ տարածուած մեր Անկախութիւնը եկաւ ու հասաւ Սեպտեմբերի 21-ին: Հասաւ՝ հպարտ, գլուխը բարձր, հասաւ ու մի բառ սասց միայն.

- ԱՅՈ՛՛ ...»

Այո, 21 Սեպտեմբեր 1991-ին, Հայաստանի մէջ հայ ժողովուրդը միակամ վճռեց իր ապագան: Վճռեց անկախանալ ու ներքոյիշեալ պատմական քուէաթղթիկին հարցումին պատասխանելով «Այո», իր հայրենիքը դարձուց Հայաստանի Անկախ Հանրապետութիւն:

Համաձայն եք,
Որ Հայաստանի Հանրապետութիւնը լինի անկախ ժողովրդավարական Պետութիւն ԽՍՀՄ-ի կազմից դուրս
ԱՅՈ ~~Ք~~

Յիշենք այդ օրը, յիշենք մեզ պարտաւորութեան տակ դնող Անկախութիւնը եւ մեր կեանքը շարունակենք սատարելով մեր անկախ հայրենիքին գոյատեւման ու բարգաւաճման, այն ամէն ձեւերով ու միջոցներով որ ունինք ու կրնանք ստեղծել:

Եւ որպէսզի կարողանանք մեր անկախութիւնը պահպանել, որպէսզի կարենանք ինչպէս մեր Նահապետ՝ Հայկը, հպարտութեամբ շարունակել ապրիլ, պետք է անկախանանք նաեւ մենք, մեզմէ իւրաքանչիւրը:

Անկախանանք մեր բարդութիւններէն:

Մօտ վեց դար պետականութենէ զուրկ, օտարի լուծին տակ իր գոյութիւնը շարունակող մեր ժողովուրդին մէկ կարեւոր մասը, քիչ թէ շատ, կամայ-ակամայ կորսնցուցած է իր դիմագիծը, դառնալով իր եւ տարբեր ժողովուրդներուն բարքերուն եւ սովորութիւններուն խառնուրդով ստեղծուած զանգուած՝ որ մեծ մասամբ կը գործածէ ֆրանսախառն, անգլիախառն, արաբախառն, նոյնիսկ իր հայրենի հողին վրայ, ռուսախառն աղաւաղուած լեզու մը:

Ընդհանրապէս մեր ժողովուրդը, որոշ վայրերու մէջ կը տառապի գերակայութեան՝ եւ այլ վայրերու մէջ՝ ստորակայութեան զգացումով:

Ան կը տառապի նաեւ մարդ արարածին բնորոշ կարգ մը աղիտաբեր, ընդգծուած բարդութիւններով, ինչպիսին են ստրկամտութիւնը, Եսամոլութիւնը, փառասիրութիւնը, նիւթապաշտութիւնը, կաշառակերութիւնը եւ այլն, որոնք եթէ բազմամարդ, մեծ, զօրաւոր ու արդէն ճանապարհի հարթած պետութիւններու համար նուազ մտահոգիչ են, մեր 12-ամեայ դժուարին ճանապարհ կտրած ու հազիւ քիչ մը շունչ քաշած նորանկախ հայրենիքին համար՝ կործանարար:

Ի շահ մեզի եւ մեր զաւակներուն ապագային ու գոյատեւման, փորձենք մոռնալ մեր «ԵՍ»ը, հանդուրժենք զիրար, որ հազարամեակներ փառաւոր պատմութիւն ու մշակոյթ կերտած մեր ժողովուրդը, առանցք ունենալով իր այս փոքրիկ հողատարածքը եւ վերականգնած անկախ դեռեւս մանուկ պետականութիւնը, կարենայ խաղաղութեամբ եւ արագօրէն ստեղծել մեր երագած զօրաւոր ու հպարտ հայրենիքը, ու Հայաստան, Արցախ եւ Սփիւռք, միասնաբար կարենանք նուաճել մեր յաւերժական գոյութեան իրաւունքը, երկիր կոչուած այս մոլորակին վրայ եւ հայրենսով երգել՝

«Եւ եղաւ լոյս» ...

Մեր հին ու նոր Հայաստան աշխարհին մէջ:



ՔԻՉ ՄԸ ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ ՅԱՅ ԳԻՐԻՆ, ԼԵԶՈՒԻՆ ՈՒ ԱԲԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՆԿԱՏՄԱՍԲ

Հայաստանի Հանրային հեռուստատեսության տեսասփռած յայտագիրները երբեմն խնդրաբեկ են երբեմն տխրութեամբ կը համակեն էութիւնս:

Նախասիրած յայտագիրներէս են երիտասարդներու եւ պատանիներու հետ կատարուած հարցամրցումները, որոնց մասնակիցները կ'ընտրուին Հայաստանի զանազան քաղաքներէն դիմում կատարած եւ մասնաւոր քննութենէ անցած թեկնածուներու մէջէն:

«Ինչպէ՞ս Դառնալ Միլիոնատեր» ծանօթ հաղորդաշարին յայտագիրներէն մէկուն ընթացքին էր, երբ երիտասարդ բժիշկ մը մասնակիցներուն տրուած հարցումին ճիշդ եւ արագ պատասխանելով, բեմահարթակ բարձրացաւ, իր ունեցած ընդհանուր գիտելիքներուն միջոցաւ փորձելու միլիոնատեր դառնալ:

Հաղորդավարը, ինչպէս միշտ, ներկայացուց գայն թուելով անոր ունեցած բազմակողմանի գիտելիքները եւ զանազան լեզուներու իմացութիւնը:

Սկսաւ խաղը, հարցումներն ու ճիշդ պատասխանները յաջորդեցին իրարու բաւական արագ: Բժիշկը արդարօրէն արդէն շահած էր կոկիկ գումար մը, երբ հնչեց իմ կարծիքովս ամենապարզ հարցումը:

«Քանի՞ տառ ունի հայերէն այբուբենը»: Գրուեցան չորս տարբերակներ, 24-28-36-38:

Չեմ գիտեր ինչպէ՞ս պետք է որակեմ պատահաւորը:

Բժիշկը կարդալով հարցումը տատամսեցաւ: Ներքին խռովքն ու ամօթի զգացումը կարմիրով ներկեցին երեսը: Զար լռութիւն էր դահլիճին մէջ: Հաղորդավարը փորձեց փրկել կացութիւնը, կրկնելով հարցումն ու տարբերակները: Բժիշկը յայտնի յուզումով ըսաւ, թէ բնաւ չէր մտածած հաշուել մեր այբուբենը ու պահ մը կենալէ ետք շարունակեց. պատշաճ չէ բազմակողմանի գիտելիքներ ունենալ եւ.....:

* * *

Օգոստոսի առաջին շաբթուայ ընթացքին էր, հեռատեսիլի պատահաբեր վրայ էր «Մենք Գիտենք Թէ Դուն Գիտես» հաղորդաշարը: Հաղորդավարին դիմաց նստած էր վառվռուն աչքերով եւ ուշիմ նայուածքով 12 տարեկան պատանի մը:

Հաղորդաշարին տուած առաջին չորս հարցումներուն ճիշդ պատասխանները պատանին տուաւ անմիջապէս եւ շահելով ցուցադրուած առաջին մրցանակը, անցաւ երկրորդ փուլին:

Սեղանին վրայ էր յաջորդ մրցանակը՝ ձայնագրութեան գործիք մը, որ իրը պիտի ըլլար եթէ ճիշտ պատասխանէր յաջորդ հարցումին:

Եւ ահա հնչեց հարցումը: «Հետեւեալներէն ո՞ր մէկը հայկական աւանդական տօն չէ»:

- | | |
|--------------|---------------|
| 1- Ծաղկազարդ | 3- Թարգմանչաց |
| 2- Վարդավառ | 4- Աստղազարդ |

Պատանին պահ մը լարուած մտածեց, ապա՝ սկսաւ բարձրաձայն մեկնաբանել տարբերակները:

«Ծաղկազարդ»ը գիտենք, քրիտոնեական տօն է, կը տօնենք Չատիկէն մէկ Կիրակի առաջ: «Վարդավառ»ը նոր տօնեցինք, կապ ունի վարդի, սիրոյ եւ ջուր ցանելու հետ: «Թարգմանչաց»..... պահ մը մտածեց ու ըսաւ. կապ պետք է ունենայ թարգմանութեան հետ, մեր առաջին թարգմանիչը Մեսրոպ Մաշտոցն է, ուրեմն՝ ՊԵՏՔ Ե ՈՐ ԸԼԼԱՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆ: Կը մնայ «Աստղազարդ» տարբերակը: Հարցումին պատասխանը «Աստղազարդ» է:

«Պատասխանը ընդունուած է եւ ճիշդ է»: Բարձր հնչեց հաղորդավարին ձայնը:

Ուրախ էր պատանին, ուրախ էր դահլիճը, ուրախ էի եւ յուզուած նաեւ ես:

Ուրախ էի ի տես այս ուշիմ պատանիին, որ վըստահաբար ուներ իր նմանները Հայաստանի մէջ, որոնք այս վերջին 10-15 տարիներուն ծնած, հասակ նետած ու կրթուած էին, պատանիներ որոնք դժուարին պայմաններու տակ սորված էին մտածել, մեկնաբանել, կշռել եւ ամենակարեւորը՝ գիտակցիլ ազգայինին կարեւորութեանը ու վճռական պատասխան տալ լեցուն դահլիճի մը առջեւ նստած: «ՊԵՏՔ Ե ՈՐ ԸԼԼԱՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆ» է:

Այս պատանին է եւ իր նման ուրիշ հայ պատանիներ սփռուած աշխարհի չորս դիւ, որոնք պիտի կերտեն մեր հայրենիքին ու ժողովուրդին ապագան:

Տխուր էի բժիշկին համար: Տխուր էի որ չէր մտածած նախանձախնդիր ըլլալ իր մեծ ժառանգութեան հանդէպ ու գտնուած էր նման ոչ ցանկալի վիճակի մը մէջ: Սակայն, ուրախ էի նաեւ որ քաջութիւնը ունեցաւ դահլիճին առջեւ քննադատելու ինքզինք ու գուցէ իր կեանքին մեծագոյն դասը առած՝ ձգեց բեմը:

Պատահարները յաճախ պատգամներ են ուղղուած մեզի: Գիտնանք օգտուիլ անոնցմէ:


Արաքսի Տօվլէթեան



ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑ ՏԵՐ ԶԵՆՈՆ ՔԱՐԱՆԱՅ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ ՀԵՏ

Հ- Կրնայի՞ք հակիրճօրեն ներկայացնել ձեր կենսա-րականը:

Պ- Ծնած եմ 1975 թ. Դեկտեմբերի 17-ին՝ Երեւան: 1991 թ. աւարտած եմ Գրիգոր Զոհրապի անուան միջնակարգ դպրոցը: 1993 թ. ընդունուեցայ Վազգէնեան հոգեւոր դպրանոցը, որն աւարտեցի 1998-ին: Նոյն տարին ընդունուեցայ Գեորգեան Հոգեւոր ճեմարան եւ զայն աւարտելով, 1999-ի Մայիսի 25-ին ձեռնադրուեցայ սարկաւազ եւ նշանակուեցայ աշխատանքի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քարոզչական կեդրոնին մէջ՝ որպէս մշակութային բաժնի պատասխանատու: Ապա, տեղափոխուեցայ Արարատեան Հայրապետական Թեմ, ուր ստանձնեցի հոգեւոր ռատիոհաղորդումներու պատասխանատուութիւնը:



յութիւնը Ե-իպտո՞ս եղաւ: Ինչպէ՞ս տաք Ե-իպտոսը եւ Ե-իպտահայութիւնը, ձեր երեւակայութեանն որքան տարբեր կամ մօտ:

Պ- Այո, իմ առաջին առաքելութիւնս արտասահման՝ եղաւ Եգիպտոսը: Հարկ չեմ զգար խօսելու իմ երեւակայութեանս մօտ կամ հեռու ըլլալուն մասին, որովհետեւ երեւակայութիւնն ու իրականութիւնը տարբեր հասկացողութիւններ են եւ այս պարագային երեւակայութեան կարեւորութիւնս պէտք չէ տալ:

Իսկ ինչ կը վերաբերի Եգիպտոսին եւ Եգիպտահայութեան, Եգիպտոսի քաղաքակրթութիւնը աշխարհի ամենահին քաղաքակրթութիւններէն մէկը եղած է եւ Եգիպտոս ունի իր պատմական անվիճելի դիրքը:

Գալով Եգիպտահայութեան՝ անոր վերաբերմունքը շատ ջերմ էր մեր հանդէպ առաջին իսկ օրէն եւ այս առիթով իմ շնորհակալութիւնս կը յայտնեմ այդ վերաբերմունքին համար:

Հ- Ի՞նչ ակնկալութիւններ ունիք աղուքին հաւատացեալներէն՝ մանաւանդ երիտասարդներէն:

Պ- Գաղութի անդամներէն ակնկալածս այն է, որ անոնք հայկական եկեղեցի յաճախեն եւ իրենց հաւատքին մէջ աւելի զօրաւոր ըլլան եւ արթուն, որ վայելեն Աստուծոյ պարգեւած շնորհներն ու արգասաբեր օրհնութիւնը:

Հ- Ձեր կարծիքով, եկեղեցի չյաճախելը ինչի՞ արդիւնք է: Գրաբարին անհասկնալի ըլլալո՞ւն, վայրի՞ն հեռաւորութեա՞ն, հաւատքի պակասի՞ն կամ այլ պատճառներու:

Պ- Ես կրնամ յստակօրէն հաստատել որ գրաբար լեզուն պատճառ չի կրնար հանդիսանալ եկեղեցի չյաճախելու համար:

Միւս պատճառներուն մասին սակայն, տակաւին յստակ եւ անաչառ պատասխան չեմ կրնար տալ, որովհետեւ տակաւին ծանօթ չեմ գաղութին:

Հարցազրոյցը վարեց՝ Հարի Զէչճեւեան

2001 թ. Փետրուարի 21-ին ձեռնադրուեցայ քահանայ եւ նշանակուեցայ խորհրդակատար քահանայ Երեւանի Ս. Սարգիս եկեղեցիին, որմէ ետք նոյն պաշտօնը ստանձնեցի Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ կողակառոյց Մայր եկեղեցիին մէջ:

2003 թ. Յունիսին նշանակուեցայ Գահիրէի հայութեան հոգեւոր հովիւ:

Հ- Վազ Էնեան Հո-ւտոր Դ-պրանոցը ո՞ր տարիքին կ'ընդունի իր ուսանողները: Աստուածաբանութեան կողքին ի՞նչ նիւթեր կը դասաւանդուին եւ վկայուելէ ետք՝ անպայմա՞ն է եկեղեցական դառնալը:

Պ- Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցը* կ'ընդունի 16-էն 21 տարեկան պատանիներ եւ երիտասարդներ:

Աստուածաբանութեան կողքին կը դասաւանդուին հայերէն, ռուսերէն, անգլերէն եւ լատիներէն լեզուներ, նոյնպէս հայ եւ օտար գրականութիւն, հայոց պատմութիւն, հայ եկեղեցիի պատմութիւն, տրամաբանութիւն եւ այլ նիւթեր:

Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցը աւարտելէ ետք, եկեղեցական դառնալը ցանկալի է, բայց ոչ պարտադիր:

Հ- Դ-էպի արտասահման ձեր առաջին առաքել-

*- Արարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդական փոխանորդ Գարեգին Արք. Ներսիսեանի (1999-Էն՝ Գարեգին Բ. Ներսիսեան Ամենայն Հայոց Կաթողիկոս) նախաձեռնութեամբ եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. Պալճեանի օրհնութեամբ 1990-ին հիմնադրուած է Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցը, Սեւանի թերակղզիին մէջ:

- Ի յիշատակ Վազգէն Ա. Վեհափառին՝ հոգեւոր դպրանոցը կոչուած է «Վազգէնեան»:

- Վազգէնեան Դպրանոցը գիշերօթիկ, հնգամեայ ուսումնական հոգեւոր հաստատութիւն է, որուն շրջանաւարտները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգեան ճեմարանին մէջ մէկ տարի եւս ուսանելով, կ'անցնին հոգեւոր ծառայութեան:

- Վազգէնեան Դպրանոցին մէջ սարկաւազական առաջին ձեռնադրութիւնը եղած է 1992-ին: Ան իր ինը հոգիները անդրանիկ հունձը տուած է 1996-ին:

- Արարատեան Հայրապետական Թեմի ամերիկահայ բարերարները 1998-ին հիմնած են «Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոց» հիմնադրամը, որ Սեւանայ թերակղզիին Ս. Աստուածածին եկեղեցիին եւ վանական համալիրին հոգեւոր դպրանոցին կողմէն մասնաշէնքերուն շինարարական աշխատանքներուն կը սատարէ:



ՄԵԿ ՀԱՉԱՐԱՄԵԱԿ, ՄԵԿ ԴՈՒՌ ԵՒ ԵՐԵՔ ՀԱՅ

Եգիպտոսի մեջ Ֆաթիմեան Խալիֆայութիւնը տեւեց մօտաւորապէս 2 դար, 969–1171: Անոր վերջին հարիւրամեակին ընթացքին, երբ պետութիւնը անկումի ճամբան բռնած էր արդէն, հայերը փայլեցան Եգիպտոսի պետական հորիզոնին վրայ եւ երկրին ճակատագիրը վարեցին:

Ֆաթիմեան Խալիֆայութեան հայ կառավարիչներու դարաշրջանը կը սկսի այն հայով, որուն հայկական անունն ու ծննդավայրին մասին լուռ կը մնան պատմական աղբիւրները:

Կ'ըսուի, թէ Հայաստանի վրայ կատարուած արաբական արշաւանքներէն մեկուն ընթացքին ան գերի ինկած իշխան մը, կամ զինուոր մըն էր, որ Սուրիա բերուելով ծախուած էր Կամալ էլ Տին Պին Ամմար անուն անձնաւորութեան մը, որուն մօտ ան ծառայած էր եւ դաւանափոխ ըլլալով՝ իր տիրոջ անունով կոչուած՝ Պատր էլ Տին ալ Կամալի էլ Արմանի:

Համաձայն պատմաբաններու տուած տեղեկութիւններուն, Պատր էլ Տին էլ Կամալի անուանուած այս հայը իր գերեզմարութեան ընթացքին իր քաջութեամբ, ռազմական փայլուն ձիրքերով, հնարամտութեամբ եւ ղեկավարելու բացառիկ կարողութեամբ այնքան նշանաւոր հանդիսացած է, որ աստիճանաբար պաշտօնէ պաշտօն փոխադրուելով, նախ Դամասկոսի Էմիրութեան պաշտօնը, ապա՝ Աքքայի մէջ Մուսթանսիր Խալիֆային փոխանորդութիւնը ստանձնած է:

Պատր էլ Տին ալ Կամալի էլ Արմանիի կեանքը Եգիպտոսի մէջ կը սկսի 1073 թուականին: Մուսթանսիր Խալիֆային հրաւերով, ան իր հայերէ կազմուած զօրքով կը հասնի Եգիպտոս, կը փրկէ երկիրը ներքին խռովութիւններէ, կը պաշտպանէ զայն արտաքին թշնամիներէն, խաղաղութիւն կը հաստատէ երկրին մէջ ու որպէս գնահատանք այս բոլորին, Խալիֆային կողմէ կ'արժանանայ լանջատուած վերարկու կրելու իրաւունքին եւ «Բանակներու Հրամանատար», Մահմետական «Գաւիթներու Խնամատար եւ Հաւատացեալներու Զարոգիչներուն Առաջնորդ» տիտղոսին ու կը դառնայ երկրին առաջին հայ վեզիրը:

Ծնունդով հայ Էմիր էլ Կիուշ Պատր էլ Կամալի նշանաւոր կը դառնայ նաեւ իր շինարարական գոր-

ծունեութեամբ: Ան կառուցել տուած է բազմաթիւ յիշատակարաններ, որոնց մեծ մասը դարերու ընթացքին կորսուած է: Ան շինել տուած է նաեւ Գահիրէի երկրորդ պարիսպը - առաջինը աղիւսէ շինուած էր հրամանատար Կաուհարի կողմէ՝ պարիսպին երեք դմները, Պապ էլ Նասր, Պապ էլ Ֆութուհ եւ Պապ Չուէյլա, Պերկեուանի շուկան, մզկիթներ, եւայլն:



Պապ Չուէյլան վերաշինութենէն առաջ

Պարիսպին եւ դմներուն շինութեան ժամանակ է որ Պատր էլ Կամալի Եղեսիայէն (Ուրֆա) Եգիպտոս կը հրաւիրէ երեք հայազգի վարպետ շինարարներ որոնք կը կառուցեն պարիսպը եւ վերոյիշեալ դմները:

Դարձեալ պատմութիւնը լուր է. ոչ մէկ պատմիչ կը յիշէ անունները երեք հայ եղբայրներուն որոնցմէ իւրաքանչիւրը կը շինէ այդ դմներէն մէկը: Պարիսպ եւ դմներ՝ որոնք պիտի դիմանային մօտ հազարամեակ մը, դարերու խորէն մեզի հասցնելու Հայաստանի Բագրատունեաց Թագաւորութեան փառքը հանդիսացող, Անի մայրաքաղաքին քարաշէն պարիսպներուն ու դարպասներուն շինարարութեան մէջ ցոլացող հայկական ճարտարապետութեան յատկանիշները: Այս մասին կը վկայեն իսլամական ճարտարապետութեան յայտնի մասնագետ Զրեգուէլն ու այլ օտար մասնագետներ:

Եգիպտոսի Մշակոյթի Նախարար Տոքթ. Ֆարուք Հոսնիի ձեռնարկած հին Գահիրէի վերականգնման աշխատանքներուն ծիրէն ներս, Եգիպտոսի Ամերիկեան Հետազօտութեան Կեդրոնի Եգիպտական հնութիւններու ծրագրաւորման ACRE-EAP USAID-ի նիւթական աջակցութեամբ, Ֆաթիմեան Գահիրէի հարաւային մուտքը համարուող Պապ Չուէյլայի վերականգնման ու պահպանման աշխատանքները ղեկավարելու ու իրականացնելու համար, կը հրաւիրուի Պապ Չուէյլայի հետ առընչութիւն ունեցող հայերու շարքին երրորդ հայը, որ կու գայ իրեն ազգակից նախնիներուն փառքը փրկելու ու փոխանցելու գալիք հազարամեակին:

Արդեօ՞ք պատմութիւնը պիտի պահէ անունը այս հայուհին որ կը կոչուի Տոքթ. Նայիրի Համբիկեան:

Նայիրի Համբիկեան կրտսեր դուստրն է բազմավաստակ դաստիարակ Յակոբ Համբիկեանի եւ Անահիտ Զիրազեանի: Չայն կարելի է բնութագրել որպէս պոռթկացող ներքին ուժով անխոնջ աշխա-



տող, համեստութեամբ փայլող ու ժպիտով գրաւող անհատականութիւն:

Նայիրին Գահիրէի Այն Շամս համալսարանին մէջ ուսանելու շրջանին, 1977–1982, արդէն կը սկսի աշխատիլ, իր մասնակցութիւնը բերելով Սինայի տարածքին խճաքարերուն եւ կրանիթին քննաչափութեան ծրագիրին աշխատանքներուն ու կը շարունակէ իր ուսանողական կեանքը այսպէս, մէջընդմէջ աշխատելով եւ ուսանելով: Մինչեւ 1997, ան ձեռք կը բերէ երկու մագիստրոսի եւ տոքթօրականի մը աստիճանները, առաջին երկուքը Հայաստանի եւ Եգիպտոսի՝ իսկ տոքթօրականը, ԱՄՆահանգներու մէջ:

1985–2003 Նայիրին աշխարհի կարգ մը քաղաքներու զանազան հայկական եւ օտար կեդրոններուն մէջ տուած է դասախօսութիւններ, կազմակերպած ու մասնակցած է ցուցահանդէսներու եւ մասնակցած միջազգային համագումարներու:

1987–էն սկսեալ Նայիրի Համբիկեանի մասնագիտական յօդուածները լոյս տեսած են հնագիտական, ուսումնասիրական եւ զանազան այլ ընկերակցութիւններու մամուլին մէջ, կամ հրատարակուած՝ առանձին պրակներով: Մամուլի տակ են կարգ մը ուսումնասիրութիւններ ու հրատարակութեան գրեթէ պատրաստ՝ երկու հեղինակութիւն:

Նայիրին 1998–ի Ապրիլէն ի վեր կը վարէ 11–րդ դարու պատմական Գահիրէի դռներէն Պապ Չուէլայի, Էլ Տարպ Էլ Ահմարի եւ Էլ Սուքքարիայի վերանորոգման ծրագիրը: Ան 184 հոգիէ բաղկացած խումբ մը ղեկավարելով արդէն աւարտած է Պապ Չուէլայի վերականգնումը, որուն պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 14 Սեպտեմբեր 2003–ին:

Բացումը կատարեց Եգիպտոսի մշակոյթի նախարար Ֆարուք Հոսնին: Ներկայ եղան Եգիպտոսի մօտ ԱՄՆ դեսպան Տէյվիտ Ուէլշ, Հնութիւններու Բարձրագոյն Խորհուրդի ընդհանուր տնօրէն Տոքթ. Չահի Հաուաս, հնութիւններու իսլամական բաժնի տնօրէն Ապտալլահ Էլ Աթթար, Գահիրէի Առաջնորդական փոխանորդ

Հոգշ. Տ. Աշոտ վրդ. Մնացականեան, ՀԲԸՄ–ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի եւ Գահիրէի Մասնաճիւղի անդամներ, լրատուական գործակալութիւններու ներկայացուցիչներ, հոծ թիւով Եգիպտացիներ եւ օտարներ, ու սակաթիւ հայեր:

«Պապ Չուէլայան վերականգնելը մարտահրաւեր մըն էր ինծի համար, հրճուանք էր եւ հաճոյք պատճառող փորձառութիւն» կ'ըսէ Նայիրին:



Պապ Չուէլայի բացման արարողութենէն տեսարան մը

- ճակատագրի մէկ խաֆը, պատահական հանդիպում, թէ ի վերուստ սահմանուած եղելութիւններու շարք, որուն դերակատարները պէտք էր հայ ըլլային կը հարցնեմ Նայիրին:

Ան կը ժպտի իր համակրելի ժպիտով, ու իր հօրմէն ժառանգած համբիկեանական խանդավառութեամբ, մանրամասն

բացատրութիւններ կու տայ, մէջ ընդ մէջ խօսելով Ֆաթիմեան շրջանի պատմութեան, Պապ Չուէլայի հետ առընչութիւն ունեցող պատմական իրողութիւններուն, ժողովուրդին կենցաղին ու աւանդութիւններուն եւ հազարամեակ մը առաջ իրագործուած ճարտարապետական հնարքներուն ու այս վերջին հինգ տարիներու ընթացքին Պապ Չուէլայի վերականգնման համար գործածուած արդի մեթոտներուն մասին:

Արդարեւ 1998–2003, հսկայ աշխատանք տարուած է Պապ Չուէլայի 400 տարի անշարժ մնացած եւ 1.5 մէթր հողին մէջ խրած՝ իւրաքանչիւրը 4 թօն կշռող՝ երկաթեայ երեսով փայտէ դռներուն եւ շրջակայքին վերականգնման համար:



Տոքթ. Նայիրի Համբիկեան բացատրութիւններ կու տայ Եգիպտոսի մշակոյթի նախարար Տոքթ. Ֆարուք Հոսնիի, Եգիպտոսի մօտ ԱՄՆ դեսպան Տէյվիտ Ուէլշի եւ Հնութիւններու Բարձրագոյն Խորհուրդի ընդհանուր տնօրէն Տոքթ. Չահի Հաուասի

Այնքան գիտելիք, այնքան կիրք, պատմելու եւ բացատրելու այնպիսի կարողութիւն ունի Նայիրին, որ հակառակ անոր որ Պապ Չուէլայէն ներս եւ դուրս երթեւեկող ինքնաշարժերուն, կառքերուն եւ մարդոց ահռելի աղմուկը սաստիկ կը նեղէ քեզ, արգելք չըլլար որ Նայիրին քեզ ակամայ փոխադրէ այդ հին–հին միջնադարեան օրերը, անջատէ քեզ շրջապատող, եւ աչքիդ առջեւ պարզէ անցեալը: Կը տեսնես դռներուն բացելիլը: Ականջիդ կը հնչեն դարպասէն ներս մտնող



շքախումբին ձիերուն ոտքերուն դոփիւնը ու կանգնած մուտքին՝ երեւակայես քիչ հեռուն գտնուած հրապարակին անցուդարձերը, իրարու դէմ կանգնած շքեղ պալատները, կը հիանաս ու կը փոքրասա կատարուած մեծ աշխատանքին առջեւ:

Կը դիտես շրջապատդ, ու երբ աչքդ վեր կը բարձրացնես, կը մնաս անշարժ...: Մուտքին, գմբեթաւոր առաստաղէն քեզի կը նայի հայկական յաւերժութեան նշանը որ գրուած է գմբեթին ամբողջ կոնուսիւնը:

Այս անգամ յիշողութիւնս է որ զիս կ'անջատէ շրջապատես ու հայկական յաւերժութեան այս նշանէն կ'երթայ կապուելու Գահիրէի Իսլամական Արուեստի թանգարանին մէջ որպէս իրանական արուեստի գործ ցուցադրուած արծաթեայ այն բաժակին, որուն վրայ անանուն հայ վարպետը կարծես որպէս կնիք հայկականութեան փորագրած էր յաւերժութեան նշանը:

Քանի քանի հայ վարպետներ այս նոյն նշանը փորագրած են կամ քանդակած իրենց գործերուն վրայ եւ քանի քանի հայ արուեստագետներ իրենց գործերն ու վրձինները գործածելով նոյն նշանով զարդարած են գիրքեր ու տաճարներ:


Նայիրին կը վերադարձնէ զիս ներկային, առաջնորդելով մեզ Պապ Չուէլայի արեւելեան մասը: 15-րդ դարուն Պապ Չուէլայի կից կառուցուած էլ Մուայետ մզկիթին, այժմ վերանորոգուած երկրորդական դուռն ու սանդուխները քեզ կը տանին բացօթեայ ցուցասրահ մը որը Նայիրին մտադրացումս է: «Մտածեցի, թէ լաւ պիտի ըլլար Պապ Չուէլայի վերանորոգման ընթացքին գտնուած իրերը ցուցադրել տեղւոյն վրայ եւ կատարուած աշխատանքին ու գտածոներուն մասին բացատրական գրութիւններ ազուցել համապատասխան տեղերը» կ'ըսէ Նայիրին:

Արդարեւ, պատերուն վրայ ազուցուած բացատրութիւններէն զատ տեղ տեղ ապակեայ ցուցափեղկեր կան որոնցմէ մէկուն մէջ ցուցադրուած են Պապ Չուէլայի արեւելեան թեւին վերանորոգման ընթացքին պեղումներէն յայտնաբերուած իրերը՝ դրամներ, ժապաւեններ, հմայակներ, գամեր, ակրաներ եւայ-

լըն, որոնք այդտեղ դրուած էին ժողովուրդին կողմէ:

Համաձայն ավանդութեան, այդտեղ կը բնակի Էլ Մուլուալլի անուն շէյխին հոգին որ իրեն դիմող հիւանդներուն բժշկութիւն կը պարգեւէ եւ նեղութեան կամ դժուարութեան մէջ եղող հաւատացեալներուն փափաքները կ'իրականացնէ: Այս շէյխին անունով ալ՝ ժողովուրդը Պապ Չուէլայան կոչած է Պաուապէթ Էլ Մուլուալլի:

Այլ ցուցափեղկի մը մէջ են 18-րդ դարուն դարպասին արեւելեան կողմը գործած սրճարանէ մը գտնուած կլկլակներուն ջուրի խողովակները, գանազան տեսակի ու չափի ծխամորճներ, սուրճի գաւաթներ եւ սպասներ: Գտնուած չինական եւ իրանական ոճի նկարազարդուած յախճապակեայ գանազան սպասներու մնացորդները կը փաստեն նաեւ այդ վայրին մէջ յախճապակիի նորոգութեան խանութի մը գոյութիւնը:



Տեսարաններ Պապ Չուէլայի վերականգնման աշխատանքներէն

ներկայ գտնուելու քաղաքին մէջ կայացած կարելոր իրադարձութիւններուն: Հոս եւս կան բացատրական ցուցատախտակներ եւ պեղումներու ժամանակ յայտնաբերուած իրեր:

Կ'իջնենք դարձեալ առաջին յարկ: Նայիրին Պապ Չուէլայի մէջ իր հիմնած այս փոքր ցուցասրահին մէջ գետեղած է իր աշխատանքային անկիւնը, ուր եւ տարիներ ծրագրած է ու հետեւած Պապ Չուէլայի վերականգնման աշխատանքներուն:

Այցելելք Պապ Չուէլայ, մեր հիւրերը տանինք այդտեղ, ծանօթացնենք զանոնք հազարամեայ Գահիրէին եւ հպարտանանք 1092-ին Պապ Չուէլայան կառուցել տուող հայազգի վեզիրին շինարարական



Պապ Չուէլյան վերականգնած

ոգիով, կառուցող հայազգի վարպետ շինարարով ու 2003-ին գայն վերականգնող ճարտարապետ Տոքթ. Նայիրի Համբիկեանով:

Շնորհակալութիւն Նայիրի: Շնորհակալութիւն որ մեզի վերադարձուցիր մեզմէ հազարաւոր մղոն-ներ հեռու գտնուող ու դարերու պատմութիւն ունե-



Վերականգնուած Պապ Չուէլյայի համայնապատկերը

ցող մեր Նախկին մայրաքաղաքին՝ Անիի փառքը հանդիսացող ճարտարապետական ոճը կրող Ֆաթիմեան Գահիրէի այս յիշատակարանը:

Արաքսի Տօվլէթեան

Նայիրի Համբիկեան մասնա խտութեամբ ճարտարապետ է, վերականգնող եւ արուեստի պատմաբան, մասնատրաբար՝ իսլամական եւ հայկական ճարտարապետութեան պատմութեան: 1977–1997, Նայիրիին կեանքը կ'ընթանայ երկու ուղղութեամբ, ուսում եւ աշխատանք, որուն որպէս արդիւնք, իր մասնա խտութեան մէջ ձեռք կը բերէ մեծ փորձառութիւն եւ կ'արժանանայ իտական հետեւեալ աստիճաններուն:

– 1977–1982, Գահիրէի Այն Շամս համալսարան, Ե իւպտոս

Պսակաւոր Գիտութեան BS, ճարտարա խտութեան հիմնարկ, ճարտարապետութիւն եւ քաղաքային ծրա ղաւորման բաժանմունք

– Մա իստրոսի (MA) աստիճան, ճարտարապետութեան դպրոցի, Յուշարձաններու Վերականգնման եւ ճարտարապետութեան Պատմութեան բաժանմունք

1982–1984, Երեւանի Բազմարուեստից Հիմնարկ, Հայաստան.

Թէգ.– Հայերու ճարտարապետական Գործունէութիւնը Ե իւպտոսի Մէջ

– Վկայական, ճարտարապետութեան Պահպանում

1987, ICCROM, Հռոմ, Իտալիա

– Մա իստրոսի (MA) աստիճան, Իսլամական Արուեստ եւ ճարտարապետութիւն

1989–1992, Գահիրէի Ամերիկեան համալսարան (AUC), Ե իւպտոս

Թէգ.– էլ Մուսլէտի Մարիստանը եւ Շրջակայքը

– 1992–1994, Պերկլայոյի բան արանին, ինչպէս նաեւ Պոխումի, Մյունիխի, Շթութկարքի եւ Քարլէսրուիի մէջ, Գերմանիա՝ համակար շային պատկերաչափութեան եւ վերականգնման զանազան մեթոտներու վարժութիւններ, ընդմիջումներով:

– Տոքթորականի (Ph. D) աստիճան, Հնա խտութեան Նախա ծում

1995–1997, Գալիֆորնիոյ համալսարան (UCLA), Լոս Անճէլոս

Թէգ.– էլ Մալիիիյա համալիրը ժամանակի ընդմէջէն:

– Նայիրին 1998–ի Ապրիլէն սկսեալ տնօրէնն է Պապ Չուէլյայի վերականգնման ծրա ղին եւ 2000–էն՝ այցելու դասախօս «ճարտարապետական վերականգնում» ճիւղին, Ե իւպտոսի Միջազ ային համալսարանին (MIU) մէջ:



ՆԱԽԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՄՕՏ

ԱՆԴՐԱՆԻԿ Ծ. Վ. ԿՌԱՆԵԱՆ

«Խօսնակ», Յուն. – Փետր.– Մարտ 2003 թիվն մէջ լոյս տեսած հեղինակ խիստ այժմէական եւ կարեւոր դասախօսութիւնը կը հրատարակենք, յուսալով որ մեր ընթերցողները իրենց շրջապատին մէջ կ'արտայայտուին անոր մասին ու ուրիշներու ալ կը թելադրեն կարդալ զայն:

«Տ.»-Դասախօսութիւն՝ տրուած 21 Նոյեմբեր 2002–ին, Ե. եւ Ա. Տէմիրճեան Կեդրոնի Աստաներու սրահին մէջ:

Ի՞նչ կը նշանակէ կենակցութիւն

Այս երեկոյ՝ նախամուսնական կենակցութեան մասին խօսելով, կենակցութիւնը պիտի չհասկնամ իբր նշանածներու եւ անոնց ընտանիքներուն միջեւ քաղաքավարական փոխադարձ յարաբերութիւններն եւ պատշաճութիւնները: Այս երեկոյ նախամուսնական կենակցութեան մասին խօսելով՝ կենակցութիւնը պիտի բնորոշեմ իբր սեռային յարաբերութիւն ամուսնութեան պատրաստուող զոյգին միջեւ, սեռային կենակցութիւն ամուսնութենէ առաջ: Այս պատճառով՝ սոյն կենակցութիւնը «նախամուսնական» կը կոչեմ: Այս սեռային կենակցութիւնը կրնայ ըլլալ մերթապան կենակցութիւն, կրնայ ըլլալ նաեւ մնայուն բնոյթով կենակցութիւն:

Ես հարց պիտի տամ, թէ այսպիսի նախամուսնական սեռային կենակցութիւն մը ներելի՞ կամ թոյլատրելի՞ է հայերու միջեւ:

Կը խօսիմ իբր եկեղեցական

Այս հարցումին կարելի է պատասխանել իբր բժիշկ, իբր հոգեբոյժ–ընկերաբան եւ կամ իբր հոգեւորական, եկեղեցիի ներկայացուցիչ:

Բժիշկը սեռային յարաբերութեան նկատմամբ իր առողջապահական պատճառաբանութիւններն ունի, հոգեբոյժը իր հոգեբանական պատճառաբանութիւններն ունի, եկեղեցականն ալ իր բարոյական պատճառաբանութիւններն ունի: Բժիշկը հարցը պիտի դատէ առողջապահական տեսանկիւնէն: Բժիշկը սեռային կենակցութեան մասին պիտի ըսէ: Սեռային կենակցութիւնը բնական պահանջք է եւ առողջութեան համար լաւ է, պայմանաւ որ չչափազանցուի եւ առողջութեան չվնասէ:

Հոգեբոյժ–ընկերաբանը հարցը պիտի դատէ հոգեբանական առողջութեան տեսանկիւնէն, նկարագրին հաւասարակշռութիւնը պահպանելու եւ բարդոյթներ չստեղծելու տեսանկիւնէն: Ես պիտի խօսիմ այս երեկոյ իբր եկեղեցական, սեռային հարցը պիտի դիտեմ եկեղեցւոյ, կրօնի եւ բարոյականի աչքով, այնպէս ինչպէս զայն կ'ըմբռնէ քրիստոնեայ եկեղեցին:

Ամիջապէս ըսեմ, որ քրիստոնեայ հայ մը միայն բժիշկին ու հոգեբանին չի պատկանիր, այլ նաեւ եկեղեցւոյ: Հայը միայն մարդ արարած չէ, այլ նաեւ քրիստոնեայ մարդ է: Հայ մը իբր մարդ՝ ո'չ միայն մարդկային ցեղին եւ ընկերութեան կը պատկանի, ո'չ միայն պետութեան քաղաքացին է, ո'չ միայն իր ընտանիքին զաւակն է, այլ նաեւ իբր քրիստոնեայ մարդ՝ իր եկեղեցիին անդամ է:

Պիտի հարցնեք.– Հայը ինչպե՞ս իր եկեղեցիին անդամ կը դառնայ:

Հայը իր եկեղեցւոյ անդամ կը դառնայ իր մկրտութեան օրէն սկսեալ: Մկրտութիւնը հայ քրիստոնեային համար միայն աւանդական արարողութիւն մը չէ, այլ եկեղեցական անդամագրութիւն է:

Պիտի եզրակացնեմ.– ինչպէս որ միութեան մը անդամը կը յարգէ իր միութեան կանոնները ու կը գործադրէ զանոնք, հայ քրիստոնեան ալ իբր հայ եկեղեցւոյ անդամ, պիտի յարգէ եկեղեցւոյ օրէնքները եւ գործադրէ զանոնք: Անգամ մը որ անդամ դարձար, պիտի յարգես եկեղեցւոյ օրէնքները կամ ալ պիտի ուրանաս եկեղեցիդ:

Հայը 1700 տարիներէ ի վեր քրիստոնեութեան կը պատկանի: Ես պիտի խօսիմ այս 1700 տարիներու իրողութեան բարձունքէն:



Եկեղեցին ինչպե՞ս կ'ըմբռնե ամուսնութիւնը: Ի՞նչ է սեռը, sex-ը եկեղեցին համար:

Ըսող կայ որ եկեղեցին դեմ է սեռին: Ո՛չ, եկեղեցին կը դաւանի թէ սեռային յարաբերութիւնը մարդկային ցեղին համար կենսական անհրաժեշտութիւն է: Աշխարհը առու-եգ ստեղծող Աստուածը չի կրնար արուի եւ եգի սեռային յարաբերութիւնը գեշ բան կամ մեղք նկատել, ապա թէ ոչ՝ Աստուած մարդը արու եւ եգ չէր ստեղծեր: Ամէն տեսակ կեանքի շարունակութիւնը բնութեան մէջ պայմանաւորուած է արուի եւ եգի սեռային մերձեցումով:

Աղամ-Եւայի գործած մեղքը եկեղեցւոյ համար սեռային չէր, այլ Աստուծոյ դեմ անհնազանդութիւն էր:

Սակայն աշխարհը արու-եգ ստեղծող Աստուածը, զայն արու եւ եգ ստեղծելով՝ իր յստակ նպատակն ուներ: Արուի եւ եգի տարբեր գոյութեան բնական եւ հիմնական արդարացումը սերնդագործութիւնն է, եակներուն գոյութեան յաւերժացումն է: Սակայն եկեղեցին կ'աւելցնէ, թէ սեռերու գոյութեան միակ նպատակը փոխադարձ հաճոյքը չէ: Արարիչը սեռային յարաբերութեան մէջ այդ զօրաւոր հաճոյքը դրած է սերնդագործելու համար, Յեղին գոյութիւնը ապահովելու համար: Ուստի սեռային յարաբերութիւնը առանց սերնդագործելու նպատակին՝ գեղծում է Աստուծոյ համար ըստ եկեղեցիին հաւատքին: Սերնդագործութիւնը եկեղեցւոյ եւ քրիստոնեային համար ամուսնութեան ճամբով է, ամուսնական յարկին տակ է: Ամուսնութիւնը շատ նպատակներ ունի, բայց գլխաւոր նպատակը սերնդագործութիւնն է: Ամուսնացած զոյգերու միջեւ սերնդագործութեան վնաս բերող ամէկ անկարգութիւն կամ գեղծում, ինչպէս նաեւ անբնական յարաբերութիւնները, դատապարտուած են Աստուծմէ եւ եկեղեցիէն:

Պիտի ըսենք.– Եթէ սեռային յարաբերութիւնը միայն սերնդագործումի համար է, այս պարագային մարդկային սարսափելի աճին առաջքը ինչպե՞ս պիտի առնուի, եթէ ամէն սեռային յարաբերութեամբ՝ անպայման սերնդագործում պիտի փնտռենք: Կը պատասխանենք որ մարդկային աճին առաջքը առնելու օրինաւոր միջոցներ կան, որոնք թելադրուած են նաեւ եկեղեցիին կողմէ: Կարելի է սեռային յարաբերութիւն ունենալ առանց սերնդագործումի, որոշ մեթոտներ գործադրելով: Այս մասին ուրիշ առիթով:

Երկու օրէնքները

Նիւթս աւելի լուսաբանելու համար՝ հոս խօսիմ մարդկային ընկերութեան վերաբերող երկու հիմնական օրէնքներուն մասին:

Աշխարհիս վրայ երկու տեսակ օրէնք կայ. բնական օրէնքը եւ յայտնեալ կամ աստուածային օրէնքը:

Բնական օրէնքը բնութեան օրէնքն է: Բնական օրէնքով է, որ բնութիւնը կ'ապրի եւ կը կառավարուի: Բնութեան օրէնքին վրայ կը հիմնուին գիտութեան օրէնքները, ընկերային օրէնքները, պետութեան օրէնքները: Մարդկային ընկերութեան մշակած յետագայի օրէնքները նմանապէս հիմնուած են բնական օրէնքին վրայ, ինչպէս մարդու ազատութեան օրէնքը, հաւասարութեան եւ սեփականութեան իրաւունքը, եւն.: Առաջին մարդիկը բնական օրէնքով է, որ ապրած են եւ սերնդագործած են: Սակայն մարդը զարգանալով՝ լքած է բնական օրէնքի անտառին եւ անասուններուն սեռային խառնակեցնադրութիւնը եւ մայուն զոյգի վերածուած է ընտանիքի դրութեան տակ:

Բնական օրէնքին վրայ կու գայ աւելնալ յայտնեալ կամ աստուածային օրէնքը: Բնական օրէնքը նախնական օրէնքն է, ան Աստուծոյ կողմէ տրուած է իբր Արարիչ, բայց յայտնեալ կամ աստուածային օրէնքը բան մը կ'աւելցնէ բնական օրէնքին վրայ, զայն կ'ազնուացնէ: Յայտնեալ կամ աստուածային օրէնքը Աստուծոյ կողմէ յատուկէն յայտնուած օրէնքն է, Աստուծոյ կողմէն մարդուն տրուած օրէնքն է: Ան մարդուն փոխանցուած է աստուածային յայտնութեամբ կամ պատգամաբերի մը միջոցով՝ ա՛յն ժողովուրդներուն մօտ, որոնք Ս. Գիրք ունին, ինչպէս հրեան, քրիստոնեան եւ իսլամը: Աստուծոյ օրէնքներուն նմոյշ են 10 պատուիրանները (մի՛ սպաններ, մի՛ շնար, մի՛ գողնար եւն.), եւ եկեղեցւոյ պատուիրանները (Կիրակի օրը պատարագ տեսնել, ծոմ պահել, ամուսնութիւնը անքակտելի պահել, եւն.):

Ի՞նչը եկեղեցին կ'ար իլէ

Վերադառնալով նախամուսնական կենակցութեան հարցին, կ'ըսենք թէ Եկեղեցին սեռային յարաբերութիւնը բարձրացուցած է բժիշկին եւ հոգեբոյժին տեսակետէն եւ հասկացողութենէն վեր: Բժիշկը եւ հոգեբոյժը սեռային յարաբերութիւնը կը դիտեն գլխաւորապէս բնական օրէնքին լոյսին տակ: Եկեղեցին սեռային յարա-



բերութիւնը բարձրացուցած է արարքին բնական եւ ֆիզիքական տարողութենէն վեր, բժիշկին եւ հոգեբոյժ-ընկերային տեսակետէն աւելի վեր ու զայն գաղափարականի վերածած է Ս. Պսակի խորհուրդով: Ս. Պսակով՝ եկեղեցին մարդկային ընտանիքին սրբութիւնը կը փոխանցէ:

Եկեղեցիին օրէնքին համաձայն՝ միայն ամուսնութիւնը իրաւունք կու տայ աղջիկ-տղուն իրենց սերը սեռային յարաբերութեամբ յայտնելու: Զետեւաբար եկեղեցւոյ համար նախամուսնական կենսակցութիւնը ապօրինի արարք է: Զարց պիտի տաք թէ եկեղեցին իրաւունք ունի՞ բնութեան օրէնքին վրայ իր օրէնքները դնելու, զայն խստացնելու, մարդուն ազատութիւնը կաշկանդելու: Եկեղեցին իբր Յիսուսի կողմէ հաստատուած միութիւն կամ կազմակերպութիւն, եկեղեցին աստուածային օրէնքով՝ իրաւունք ունի իր անդամները իր օրէնքներով կառավարելու: Մարդ ազատ է եկեղեցիին պատկանելու կամ չպատկանելու, բայց պատկանելէն ետք՝ պետք է անոր օրէնքները պահպանէ, ինչպէս նախապէս ըսինք:

Հաւատարմութեան խորհուրդը

Ինչպէս նկատեցինք, եկեղեցին սեռային յարաբերութիւնը տարբեր տեսանկիւնէ կը դիտէ, անոր տարբեր արժէք կու տայ: Եկեղեցիին աչքին՝ սեռային յարաբերութիւնը, ամուսնութեան պատրաստուող գոյգին միջեւ, իրարու նուիրում է, սերերու եւ կեանքերու նուիրագործում է: Այս այսպէս ըլլալով՝ սեռային ժուժկալութիւնը, ֆիզիքական անաղարտութենէն աւելի՝ հաւատարմութեան ապացոյցն է, հաւատարմութիւն նախ Աստուծոյ օրէնքին, հաւատարմութիւն ապագայ ամուսինին: Ամուսնական հաւատարմութիւնը հիմնական արժէք մըն է եկեղեցւոյ համար, ինչպէս ընկերային կամ ամէն տեսակ դաշինքի պարագային: Դաշինք մը արժէք ունի եթէ հաւատարիմ ենք անոր: Եկեղեցին կ'ուզէ, որ ամուսնացող մը, իր ցուցաբերած ամուսնական ժուժկալութեամբ, իր հաւատարմութիւնը ցոյց տայ կեանքին ընկերին, թէ՛ ամուսնութենէն առաջ, թէ՛ ամուսնութենէն ետք: Ամուսնական սիրոյ մէջ հաւատարմութիւնը երկու մեծ պահեր ունի. մին՝ ամուսնութենէն առաջ, միւսը՝ ամուսնութենէն ետք:

Ամուսնութենէն առաջ սեռային ժուժկալութիւնը եկեղեցին կը պահանջէ թէ՛ այրէն, թէ՛ կիսէն, ո՛չ միայն երրորդի մը հետ, այլ նաեւ իրա-

րու հանդէպ: Սեռային հաւատարմութիւնը պահանջուած է յատկապէս կիսէն՝ ընկերային պատճառներով, որովհետեւ կիսն է ընտանիքին պահապանը՝ սերունդներու հարագատութեան: Կիսն է պահապանը ընտանեկան սրբութեան, պատուին, անաղարտութեան: Յղացողը կիսն է, կեանքի աղբիւրը կիսն է, զաւակ ծնողը կիսն է, զաւակներուն մայրը կիսն է: Զրեաներուն քով՝ մայրն է որ ազգութիւն կու տայ զաւակին, ո՛չ թէ հայրը:

Ամուսնութեան այս ամրութիւնը պահպանելու համար է, որ ամուսնութիւնը մեզ մօտ պսակ է, եկեղեցիին եօթը խորհուրդներէն մէկն է, ինչպէս ըսինք:

Անործադրելի

Անգործադրելի օրէնք մը ո՛չ ոք կը պահէ, պիտի ըսէք: Սեռային ժուժկալութիւնը պահելը անգործադրելի է, բնութեան հակառակ է: Ուստի պետք է ջնջել ժուժկալութեան օրէնքը, զոր եկեղեցին կ'ուզէ գործադրել:

Ճիշդ է, թէ մեր ներկայ դարուն մէջ՝ բարքերուն ծայրաստիճան թուլացումով, սեռային զեղծումներու տարածումով եւ ազատութիւններուն սանձարձակութեամբ, նախամուսնական ժուժկալութիւնը անկարելի կը թուի:

Եկեղեցին իր 21 դարերու գոյութեան մէջ՝ այս մասին տարբեր փորձառութիւն մը ունի: Ան կը հաւատայ, թէ դարերը կը շրջին, պատմութեան մէջ պատերազմի դարին մշակոյթի դարը կը յաջորդէ, մարմնապաշտութեան դարուն՝ հոգեպաշտութեան դարը կը հետեւի: Դարերը կը շրջին, մարդկային բարքերը ելեւէջներ կ'արձանագրեն, բայց օրէնքը կը մնայ, ինչպէս ջուրերը կ'անցնին, կամուրջը կը մնայ: Եկեղեցին կը հաւատայ, թէ ազգերու մօտ քաղաքակրթութիւններ փրկուած են օրինապահութեան եւ ժուժկալութեան շնորհիւ: Զոմեական կայսրութիւնը տապալեցաւ երբ իր ժուժկալ բարքերէն հեռացաւ:

Ազգեր կան, որ չարքաշ են, ազգեր ալ կան, որ թուլամորթ են: Միջին դարու ասպետները յիշեցէ՛ք: Ասպետը անկողին կ'երկարեր սուրը դրած իր եւ իր սիրածին միջեւ: Չարքաշ ազգերէն ենք մենք, հայերս: Ժամանակին՝ մեր հայրերը նախամուսնական ժուժկալութիւնը ինչպէ՞ս կը պահէին:

Ըստ իս՝ անկարելի բառը յարաբերական է:



Լիբանանի պարագային՝ կը կարծուեր թէ որոշ օրէնքներու գործադրութիւնը անկարելի բան է մեր անզուսպ լիբանանցիներուն համար, օրինակ՝ երթելեկի օրէնքը: Պէ՞տք է մեր երթելեկը առանց օրէնքի թողուլ: Սակայն պետութիւնը կարգապահութեան օրէնքէն չի հրաժարիր, անոր վրայ կը պնդէ: Այսօր եթէ զանցառողներ կան, պահպանողներ ալ կան:

Օրէնքը անհրաժեշտ է մարդկային ընկերութեան մէջ, Լոյսիսկ եթէ շատեր զայն կը խախտեն: Որքան ալ օրէնքը խախտողներ ըլլան, օրէնքը չի դադիր անհրաժեշտութիւն մը ըլլալէ:

Օրէնքը պիտի մնայ, խախտողներ ալ պիտի մնան: Այս խախտումները որքան նուազեցնենք, այնքան լաւ կ'ապրինք, այնքան քաղաքակիրթ կ'ապրինք:

Եկեղեցին, որ ժուժկալութեան պահպանն է, իր դէմ գործող ներքին եւ արտաքին թշնամիներ ունի: Գլխաւոր հակառակորդը՝ քրիստոնէութեան ու անոր բարոյականին դէմ պայքարող երբեմն թաքուն, երբեմն յայտնի ուժերն են որոնք անբարոյութիւնը, պոռնկագրութիւնը ու հաշիշը ամէն տեղ կը տարածեն, և որ սերունդները ուժագրկելու եւ այլասերելու համար:

Արդարացում

Նախամուսնական ժուժկալութեան հակառակող անձեր կան, որոնք կը կարծեն, թէ ապագայ ամուսնացեալները կամ նշանածները իրաւունք ունին ամուսնութենէն առաջ սեռային յարաբերութիւն ունենալու, որպէսզի զիրար փորձեն, տեսնելու համար, թէ սեռայնապէս իրարու ներդաշնա՞կ են: Կը պատահի, որ նշանուած զոյգեր իրարու ըսեն. Քանի որ իրարու հետ պիտի ամուսնանանք եւ արդէն իրարու կը պատկանինք, ինչո՞ւ վաղուան պսակին սպասենք՝ իրար ֆիզիքապէս սիրելու համար: Կը պատահի նաեւ որ նշանուած տղան նշանուած աղջիկէն պահանջէ իբր սիրոյ նշան՝ պսակէն առաջ սեռային յարաբերութիւն ունենալ. - Եթէ զիս կը սիրես, թոյլ պիտի տաս: Չես ուզեր, ուրեմն՝ զիս չես սիրեր:

Կեանքի փորձառութիւնը հակառակը փաստած է:

Միջոցներ

Միջոցներ կա՞ն ամուսնութենէն առաջ ժուժկալ մնալու:

Միջոցներ կան: Ժամանակին՝ այդ միջոցներէն մին էր զաւակները կանուխ ամուսնացնելը: Ներկայիս կանուխ ամուսնութիւնը տնտեսական, զարգացումի, համալսարանական, ասպարեզային եւ այլ պատճառներով հազուադէպ դարձած է:

Անոր փոխարէն՝ կան մարզանքը, եոկան, սննդականոնը, խմիչքներէն զգուշանալը, աղօթքը, Աստուծոյ երկիւղը, բարեպաշտ ընտանիքներուն մէջ դաստիարակութիւնը, բարի ընթերցումները, գաղափարական մը ունենալը՝ Արա Գեղեցիկին կամ Նարեկացիին պէս, տեսլականի մը հաւատալը, որոշ անպարկեշտ տեսարաններէն ու վատ առիթներէն հեռանալը, անբարոյ ընթերցումներէ զգուշանալը, որոշ մարդերէ ու միջավայրերէ հեռու ապրիլը, կրակի հետ չխաղալ, ասոնք կարգ մը միջոցներ են ժուժկալ մնալու անոնց համար, որոնք կ'ուզեն ժուժկալութիւնը պահպանել:

Եթէ մտածենք թէ ժուժկալութիւնը անկարելի բան է, անհկա անկարելի պիտի մնայ:

Հարցը յաճախ ուզել-չուզելու հարց է:

Ըսուած է, թէ ուզելը՝ կարենալ է:

Հին Յունաստանի մէջ, Մեծն Աղեքսանդրի շրջանին, բանակ վայրի ձի մը բերած էին, զոր ոչ ոք կը յաջողէր սանձել: Այն համոզումը տարածուեցաւ, որ անկարելի էր զայն հեծնել: Ուստի մտածեցին ձին սպաննել: Կարգը հասաւ երիտասարդ Աղեքսանդրին, որ ձիուն մօտենալով՝ զսպեց զայն ու վրան հեծաւ: Աղեքսանդրին օրինակին վրայ, մարդիկ համոզուեցան թէ ձին կարելի է զսպել: Եւ իսկապէս բոլոր նախապէս ձախողածները յաջողեցան ձին հեծնել:

Մարդու մարմինն ալ, իր բոլոր կիրքերով ու ասիրոժակներով, անսանձ ձի մըն է, զոր կարելի է զսպել:



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Յուլիս 3, 2003-ին հանդիպում մը տեղի ունեցաւ ՀԲԸՍ-ի պատասխանատուներուն եւ Գահիրէի հայ համալսարանականներուն միջեւ: Այս հանդիպումէն ետք, ՀԲԸՍ-ի Վարչութեան հովանաւորութեան տակ կազմուեցաւ համալսարան յաճախող երիտասարդներու շարժում մը, «ՀԲԸՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ» անունով, որուն կը մասնակցին նաեւ առաւելագոյնը մինչեւ երկու տարի առաջ շրջանաւարտ եղած համալսարանականներ: Սոյն երիտասարդներէն կազմուեցաւ Կեդրոնական Յանձնախումբ մը, որմէ կը բխին հետեւեալ չորս ենթայանձնախումբերը:

1- Համացանցի (Internet) Յանձնախումբ

Պատասխանատու: Տոքթ. Գործ Սիմոնեան

2- Մշակութային Յանձնախումբ

Պատասխանատու: Տիկ. Կասիա ճղալեան

3- Ընկերային Օժանդակութեան Յանձնախումբ

Պատասխանատուներ: Տոքթ. Վի Էն Գիզմէճեան - Տոքթ. Գործ Սիմոնեան

4- Ընկերային Ձեռնարկներու Յանձնախումբ

Պատասխանատու: Տոքթ. Վի Էն Գիզմէճեան

Երիտասարդները ոգեւորուած ըլլալով, անմիջապէս սկսան հանդիպումներ կազմակերպել հայկական գանազան ակումբներու մէջ, որմէ ետք իւրաքանչիւր պատասխանատու իր գլխաւորած յանձնախումբին անդամներուն գաղափարները ներկայացուց ընդհանուր ժողովին: Այս հանդիպումներուն գլխաւոր նպատակը օգտակար միջոցառումներով եւ գործունէութեամբ հայ երիտասարդները կապել է իրարու եւ գաղութին:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Մշակութային Յանձնախումբին առաջին ձեռնարկը տեղի ունեցաւ Շաբաթ 6 Սեպտեմբեր 2003-ին, ՀԲԸՍ ՆՈՒՊԱՐԻ հաւաքավայրին մէջ: Յանձնախումբը հրաւիրած էր Տոքթ. Մուհամետ Ռեֆա'աթ Էլ-Իմամը, դասախօսութիւն մը տալու 19-րդ դարու եգիպտահայ գաղութի պատմութեան մասին:

Որոշուած ժամուն դասախօսութիւնը սկսաւ: Ներկայ էին 38 հոգի՝ մեծամասնութիւնը երիտասարդներ: Յանձնախումբին անդամներէն Այգ Չաքարեան բացումը կատարեց երեկոյին եւ հրաւիրեց դասախօսը, իր խօսքը ընելու:

Ան իր խօսքին սկիզբը նշեց թէ Հայաստանը շատ ծանօթ երկիր մըն է որ միշտ ենթարկուած է յարձակումներու իր աշխարհագրական դիրքին պատճառով: Ան համաշխարհային ճանաչում ունի նաեւ սփիւռքահայերուն միջոցաւ:

Յետոյ պարզեց, թէ Եգիպտոսը դարերու ընթացքին հիւրընկալած է տարբեր ազգութիւններ, որոնցմէ են հայերը:

Եգիպտական կառավարութեան մէջ, հայերը իրենց կարողութիւններով կրցած են հասնիլ շատ բարձր աստիճաններու: Օրինակ՝ Ֆաթիմեան շրջանին Եգիպտոսը ունեցած է վեց հայ վարչապետներ եւ գրեթէ նոյնը կրկնուած է 19-րդ դարու ընթացքին:

19-րդ դարու հայերը ընդհանրապէս զբաղած են թարգմանութեամբ: Անոնք իրենց հաւատարմութեան եւ աշխատասիրութեան շնորհիւ եղած են կառավարիչներուն անձնական թարգմանիչները:

Հայերը նոյնպէս աշխատած են տարբեր ասպարէզներու մէջ եւ մեծ յաջողութեան հասած մանաւանդ ձեռարուեստներու մէջ:

Եգիպտահայ գաղութը ունեցած է մեծ յաջողութեան հասած դէմքեր, որոնք ոչ միայն կարեւոր դեր ունեցան գաղութին՝ այլ նաեւ Եգիպտոսի պատմութեան մէջ: Ապա՝ Տոքթ. Մուհամետ մանրամասնօրէն անդրադարձաւ Պողոս Պէյ Եուսուֆեանի, Նուպար Փաշայի, Պողոս Նուպար Փաշայի, Տիգրան Փաշա Տ'Ապրոյի, Արթին Պէյ Չրաքեանի եւ Եագուպ Արթին Փաշայի գործունէութեան:

Դասախօսութենէն ետք, երիտասարդները հարցումներ ուղղեցին դասախօսին, որոնց տրուած պատասխաններէն լուսաբանուեցան բոլոր ներկաները:

Հանդիպումին ավարտին, Տոքթ. Մուհամետ շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչներուն որ իրեն առիթը տուին հանդիպելու ներկայ երիտասարդներուն հետ, եւ ըսաւ, թէ կը յուսայ որ իր այս դասախօսութիւնը կրցաւ նոր գիտելիքներ փոխանցել բոլորին, գաղութին փայլուն դէմքերուն եւ կարեւոր պատմութեան մասին:

Շնորհակալութիւն կազմակերպիչներուն եւ Տոքթ. Մուհամետին՝ պատմական գիտելիքներով լեցուն այս երեկոյին համար:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԱԱՅԱՏ ԷԼ ԱՈՒՐԱՄ (Ուռերու Հիմնարկ)

Փոքրիկներու Բաժին

ՀԲԸՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ այցելութիւն մը կազմակերպեց Մասհատ Էլ Աուրամ Հիմնարկին փոքրիկներու բաժինը, Կիրակի 14 Սեպտեմբեր 2003-ի կէսօրուայ ժամը 12.30-ին:

Սոյն հաստատութեան մէջ պատասպարուած են գանազան բնոյթի խլրդային ուռերէ տառապող փոքրիկներ:

Մասնակցող երիտասարդները պատրաստած էին կարգ մը նուէրներ հիւանդ մանուկներուն համար:

ՀԲԸՍ-ը միշտ ճանչցուած է իր կատարած ընկերային օժանդակութիւններով: Ան ոչ միայն կ'օժանդակէ եգիպտահայերուն այլ կը փորձէ կարիք ունեցող եգիպտական հաստատութիւններուն ալ օգտակար հանդիսանալ, քաջ գիտնալով թէ Եգիպտոսը միշտ հիւրընկալ եղած է հայերուն հանդէպ:

Այս այցելութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց փոքրիկներուն, որոնք ոչ միայն պէտք ունին նիւթական օժանդակութեան եւ նուէրներուն, այլ նաեւ՝ սիրոյ, գուրգուրանքի եւ հետաքրքրութեան:

Շնորհակալութիւն ՀԲԸՍ-ի երիտասարդներուն, որոնք գոնէ վայրկեաններու համար կրցան ժպիտ մը գծել այդ փոքրիկներուն դէմքերուն վրայ:

Անի Պողոսեան



ՍԿԱՌՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Երկուշաբթի, 8 Սեպտեմբերին, Հելիոպոլսոյ ՀԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵի երիտասարդները անհամբեր կը սպասէին Լիբանանի եւ Աղեքսանդրիոյ Սկաուտական Շարժումին անդամներուն Աղեքսանդրիայէն ժամանումը:

Վերջապէս ժամը 9-ին լսուեցան ինքնաշարժներուն ձայները. հիւրերը հասած էին: Ճաշասեղան մը պատրաստուած էր իրենց համար, որուն ընթացքին խումբերը իրարու ծանօթացան:

Քիչ ժամանակի մը մէջ այնքան մտերմութիւն ստեղծուեցաւ, որ չէր կրնար զանազանել թէ ո՞վ, որ խումբին կը պատկանի: Բոլորն ալ մէկ ընտանիքի մը անդամներուն նման միասին նստած պատմութիւններ կը պատմէին, կը խընդային եւ կը խօսակցէին, նոյնիսկ մինչեւ ուշ ժամանակ, քանզի ո՞վ կրնայ քնանալ նման ուրախ հաւաքներուն ընթացքին:

Յանկարծ՝ ուշ գիշերին յարձակում մը տեղի ունեցաւ ուրիշ ակումբի մը կողմէ, մեր դրօշակը ամենելու նպատակով, բայց եկողները անշուշտ չյաջողեցան:

Յաջորդ առտու նախաճաշէն ետք ճամբայ ելանք դէպի Կիզէի բուրգերը: Պայծառ եւ արեւոտ օր մըն էր, կարծես Եգիպտոսը կ'ողջունէր մեր հիւրերը:

Բոլորն ալ հիացան երբ տեսան բուրգերը, որոնք ապացոյցներն են փարաւոնեան քաղաքակրթութեան փառքին: Դժբախտաբար, միայն փոքր բուրգը կրցանք մտնել: Բայց մեզմէ շատերը ձիերու եւ ուղտերու վրայ նստեցան եւ շատ

ուրախ ժամանակ անցուցին: Այցելութեան ընթացքին բազմաթիւ նկարներ քաշուեցանք միասին, որպէս յիշատակ այս երջանիկ օրերուն:

Մեր կէսօրուայ ճաշին համար գացինք «MacDonald's»: Թիւով այնքան շատ էինք, որ բոլոր ճաշարանը լեցուցինք: Բայց իրապէս բացառիկ էր այն երեւոյթը, որ Եգիպտական ճաշարանի մը մէջ, ամէն կողմէ հայերէն կը լսուէր:

Ապա՝ ուղղուեցանք դէպի «Dream Park» ուր զանազան խաղեր խաղացինք, ոմանք քիչ մը վտանգաւոր, բայց բոլորն ալ շատ զուարճալի:

Նոյն գիշերը ՀԱՐԱՆՆԵՐԻ հաւաքավայրին մէջ տեղի ունեցաւ խրախճանք երաժշտութեան ընկերակցութեամբ, ներկայութեամբ Սկաուտական Շարժումի հիւր եւ տեղացի անդամներուն եւ կազմակերպիչ յանձնախումբին:

Չորեքշաբթի 9 Սեպտեմբերին այցելեցինք «Կինեսա Մոլ»-ի գոց շուկան եւ Հելիոպոլսոյ «Գորպա» շրջանը, ուրկէ լիբանանցիները շատ գեղեցիկ նուէրներ գնեցին, որպէս յիշատակ այն հաճելի օրերէն որ անցուցին Եգիպտոսի մէջ:

Ակումբ վերադարձին տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն, որմէ վերջ հրաժեշտ տուինք իրարու կրկին հանդիպելու յոյսով:

Սրտագին շնորհակալութիւն բանակումին բոլոր կազմակերպիչներուն եւ մասնակիցներուն:

Անի Օհանեսեան



Աւա՛ խմբապետուհի Լիւսի Թօսունեան յուշանուէր մը յանձնեց Աղեքսանդրիոյ ՀԱՐԱՆՆԵՐԻ Սկաուտական Շարժումին երկարատեւ ատենապետ եւ աւա՛ խմբապետ Կարայիս Թօսունեանի, Շարժումին ոյատեւման եւ զար աջման ճանապարհին իր կատարած անձնուէր ործունէութեան համար:

Ապա, հանդիսավարուհիին հրաւերով մասնակից խումբերուն պատասխանատուները աւանդական խարոյկը վարեցին միասնաբար: Խարոյկին շուրջ հաւաքուած սկաուտներն ու արեւուշները եր ով ու շուրջպարով խանդավառեցին մթնոլորտը:

Ինչպէս միշտ, հրաժեշտի յուզիչ եր ով վերջ տաւ հանդիսութիւնը, իսկ երեկոն շարունակուեցաւ կերուխումով:

Թղթակից՝

Գահիրէի, Աղեքսանդրիոյ եւ Պէյրութի պատասխանատուները միասնաբար կը վառեն խարոյկը

Ն. Գարբալեան



ՄԻՋԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՊԱՍՔԵԹ ՊՈԼԻ ՄՐՑԱՇԱՐՔ

Գահիրեի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ յաջորդական վարչութիւններուն համար արդէն սովորութիւն դարձած է ամէն տարի Յոկտեմբերի առաջին շաբաթավերջին կազմակերպել միջակումբային պասքէթպոլի մրցաշարք մը, յիշատակելու Եգիպտոսի 6 Յոկտեմբերի փառաւոր յաղթանակը:

Յոկտեմբեր 3-5 երկարող այս տարուայ մրցաշարքը որ նուիրուած էր Յոկտեմբեր 6-ի յաղթանակին 30-ամեակին, կը հովանաւորէր Եգիպտահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Ս. Արք. Չինչինեանը: Մրցաշարքին նախագահութիւնը ստանձած էին Գահիրեի Պատկ. Թեմական Ժողովի Ատենապետ Տիար Անդրանիկ Մետրոպեան եւ Տիկինը:

Մրցաշարքին երեք օրերուն ընթացքին տեղի ունեցան ինը մրցումներ գանազան տարիքային խումբերու միջեւ:

Երեք տողոց մրցաշարքին մասնակցեցան հետեւեալ հինգ խումբերը:

- Գահիրէն՝
- ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐ
- ՅՄԸՄ ԱՐԱՐԱՏ
- ՍՐԲՈՒՅԻ ԹԵՐԵԶԱ

- Աղեքսանդրիայէն՝
- ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐ
- ՅՄԸՄ ԿԱՍԵ



Գահիրեի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՍԱՏԻՆԵԹ ՆԱՍՐԻ 12 տարեկանէն վար աղջիկներու պատասխանատուներուն հետ

Ուրբաթ, 3 Յոկտեմբերին տեղի ունեցան երկու մրցումներ, առաջինը՝ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐ եւ ՍՐԲՈՒՅԻ ԹԵՐԵԶԱ խումբերուն միջեւ, իսկ երկրորդը՝ ՅՄԸՄ ԱՐԱՐԱՏի եւ ՅՄԸՄ ԿԱՍԵի: Յաղթական հանդիսացան ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐ եւ ՅՄԸՄ ԱՐԱՐԱՏ խումբերը:

Երեք տողոց շաբաթ օրուայ մրցումը ՅՄԸՄ ԱՐԱՐԱՏի եւ Աղեքսանդրիոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐի միջեւ ավարտեցաւ ՅՄԸՄ ԱՐԱՐԱՏի յաղթանակով:

Երեցներու ավարտական մրցումը ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՅՄԸՄ ԱՐԱՐԱՏԻ միջեւ ընթացաւ մարզական ոգիով, գրեթէ հաւասար արդիւնքներով ու խիստ հետաքրքրական: Վերջաւորութեան, 11 կէտերու առաւելութեամբ մրցաշարքի բաժակին տիրացաւ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը:

Երեք տողոց մրցաշարքին կողքին ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութիւնը կազմակերպած էր այլ մրցումներ, որոնցմէ առաջինը տեղի ունեցաւ Շաբաթ, 4 Յոկտեմբերին Գահիրեի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՍԱՏԻՆԵԹ ՆԱՍՐԻ 12 տարեկանէն վար աղջիկներու խումբերուն միջեւ իսկ երկրորդը՝ Գահիրեի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ԶԵԼԻՈՒԽՏՈՅԻ 14 տարեկանէն վար տողոց: Երկու մրցումներուն յաղթականող էին ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիկները:

Կիրակի օր, նախքան երեք տողոց ավարտական մրցումը, կազմակերպուած էին երեք մրցումներ, որոնցմէ առաջինը՝ Գահիրեի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ԿԵԶԻՐԱ մարզարանի 18 տարե-



ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 14 տարեկանէն վար տողոց խումբը, պատասխանատուներու հետ



կանեն վար տողոց խումբերուն՝ իսկ երկրորդը՝ Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՉԸՀՈՒՐ մարզարանի աղջիկներուն առաջին կարգի խումբերուն միջեւ: Այս մրցումներուն յաջորդաբար յաղթական հանդիսացան ԿԵՉԻՐԱՅԻ տղաքը եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները:

Ապա, տեղի ունեցաւ երրորդ մրցումը: Հաճելի եւ զուարթ մթնոլորտի մը մէջ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վեթերան խաղացողները մրցեցան ՍՐԲՈՒՀԻ ԹԵՐԵՉԱ խումբին հետ: Յաղթեցին հեւասպառ վեթերանները որոնց միացած էր ԱՄՆ-ԷՆ այս առթիւ ժամանած ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ նախկին մարզիկ՝ Մկօ Կոճամանեան:

Շաբաթ եւ Կիրակի օրերուն կազմակերպուած այս մրցումներուն յաղթական խումբերէն իւրաքանչիւրը ստացաւ իրեն յատուկ

յոտընկայս յարգել յիշատակը, ԱՄՆ-ի մէջ նոր մահացած ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ նախկին ատենապետ Գրիգոր Շահապէստերեանի, ինչպէս նաեւ Արամ Գուրնուեանի, ու հակիրճ խօսքով անդրադարձաւ Հոկտեմբեր 6-ի փառապանծ յաղթանակին:

Ապա, մարզադաշտ հրաւիրեց աւարտական մրցումին մասնակից խումբերը: Մրցումին մասին արդէն արտայայտուեցանք: Յիշենք միայն թէ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիկներէն Արմէն Պալթայեանի համար այս մրցումը վերջինն էր, որուն ան կը մասնակցէր, որովհետեւ ան որոշած էր քաշուիլ խումբէն, առիթը տալու որ նորեր մաս կազմեն առաջին խումբին ու ինք շարունակէ օգտակար ըլլալ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն այլ մարզերու մէջ:



Տիար Նուպար Սիմոնեան մրցաշարքին բաժակը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երեց տղոց յաղթական խումբէն Արմէն Պալթայեանի կը յանձնէ



ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երեց տղոց խումբը



ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վեթերաններու խումբը

բաժակը, նուիրուած Տեարք եւ Տիկնայք Լիպարիտ Գարգուրէ, Մարտիկ Թերզիպաշեանէ, Շահէն Մազլումեանէ եւ Կարի Զեհեայեանէ: Իսկ մարզիկներուն տրուեցան Տէր եւ Տիկին Վարդ Ալեքսանեաններէ նուիրուած մետալները:

Աւարտական մրցումը սկսելէ առաջ, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչական անդամ Տիար Արա Տեփոյեան խօսք առնելով ինչորեց մէկ վայրկեան

Մրցաշարքին աւարտին, որոտընդոստ ծափահարութիւններու մէջ, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ յաղթական խումբը, Տէր եւ Տիկին Նուպար Սիմոնեաններու նուիրած մրցաշարքի բաժակը ստացաւ, ձեռամբ նուիրատուին:

Այս յաղթանակին առիթով կը շնորհաւորենք կազմակերպիչները, պատասխանատուներն ու մարզիկները:

Ճ. Ս.



ԳՐԻՉ, ՄԱԳԱՂԱԹ, ԳՐՉՈՒԹԻՒՆ

ԳՐԻՉ կը կոչուէին անոնք, որ տպագրութեան գիւտէն առաջ ձեռագիր գիրքեր ընդօրինակելու արուեստը ունէին:

ՄԱԳԱՂԱԹԸ օգտագործուած է թուղթի փոխարէն մինչեւ 10-12րդ դար: Մագաղաթը կը ստացւէր հորթի, ոչխարի, այծի եւ լաւագոյնը՝ նորածին գառնուկի մորթէն:

ՇԱՂԿՈՂՆ ու ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉԸ այն արուեսագետներն էին, որոնք ձեռագիր մատեանները կը զարդարէին գունազեղ զարդերով եւ նկարներով:

ԳՐԿԱՊԸ կը կազմէր ձեռագիր պրակները, համապատասխան կաշեկապ կազմով եւ մետաղեայ կոճակներով:

«ԳՐՉՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍ» կամ «գրոց գիտութիւն» իւրացուցած անձը ոչ միայն գեղեցիկ եւ ընթեռնելի ձեռագիր պէտք է ունենար, այլ նաեւ լեզուական գիտելիքներ եւ գծագրելու շնորհք: Գրիչը նոյն ատեն պէտք է ըլլար վերծանող, այսինքն ձեռագիր մատեան մը կարդացող եւ հասկցող:

ՎԵՐՇԱՆԵԼԸ այսօրուան ընթերցումին պէս դիւրին չէր, որովհետեւ մագաղաթ խնայելու համար բառերը իրարու փակած կը գրէին եւ կարգ մը բառեր ալ՝ կրճատուած:

ԳՐՉԱՏՈՒՆԵՐԸ այն դպրոցներն էին, որոնք կը գտնուէին կարգ մը վանքերու կից եւ ուր վարդապետներ կը սորվէին գրչութեան արուեստը: Սեւանի ափին գտնուող Մաքանացոց վանքին մէջ, օրինակ, եօթերորդ դարէն մինչեւ իններորդ դար, մօտ ութ հարիւր վարդապետ-գրիչներ մատեաններ գրած, ընդօրինակած եւ ծաղկած են:

ԳՐՉՈՒԹԵԱՆ ՕՃԱԽՆԵՐ Եղած են պատմական Հայաստանի գանազան վայրերուն մէջ: Նշանաւոր են Սկեւռայի, Դրագարկի, Սանահինի, Հաղբատի, Գլածորի, Տաթեւի, Մեծփի եւ քանի մը այլ վանքերու գրչութեան դպրոցները:

ԳՐՉՈՒԹԵԱՄԲ ԶԲԱՂԱԾ ԵՆ՝ տղամարդ, կին, պատանիներ եւ ծերունիներ: Անոնց մէջ եղած են ազնուականներ, ամիրաներ, կաթողիկոսներ եւ եկեղեցական բարձրաստիճան պաշտօնեաներ: Սակայն բուն գրիչները, որոնք իրենց ամբողջ կեանքը յատկացուցած են այս աշխատանքին, աղքատ մարդիկ են եղած եւ գրչութեամբ վաստղած իրենց հացը:

ԳՐՉԱՊԵՏ կոչուած են ճարտար եւ բարձրորակ մասնագետները, որոնք կը ստանձնէին իշխաններու, թագաւորներու եւ բարձրաստիճան

կղերականներու պատուերները: Սակայն գրիչներու մեծամասնութիւնը նիւթական շատ նեղ պայմաններու մէջ աշխատած է, անձուկ խուցերու երդիքին տակ, ծխացող ճրագի աղօտ լոյսով: Սովը, հիւանդութիւնները եւ ւերիչներու շարուն ու հալածանքը մեծ վնասներ հասցուցած են մեր գրչութեան վաստակին, ստիպելով յաճախ, որ գրիչներ պանդխտութեան մէջ անցնեն իրենց կեանքին մնացեալ մասը:

ԳՐՉՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ ստեղծուած են նաեւ օտար երկիրներու մէջ՝ Հնդկաստան, Եգիպտոս, Ղրիմ, Իտալիա, Լեհաստան եւ նոյնիսկ ճաւաղ ու Ֆիլիպպեան կղզիներ:

ՄԵՐ ԶԵՆԱԳԻՐ ՄԱՏԵԱՆՆԵՐՈՒՓ փոքր մէկ մասը միայն հասած է մեզի, փրկուելով ժամանակի եւ օտար արշաւողներու ւերէն: Այդ փոքր մասն ալ սակայն պատկառելի թիւ մը կը ներկայացնէ՝ մօտ 24.000 ձեռագիր մատեան, որոնց մէջ ամփոփուած են հին եւ միջնադարեան մեր գրականութիւնը, պատմութիւնը, փիլիսոփայութիւնը, գիտութիւնը եւ մանրանկարչական արուեստը: Ամենէն հին ձեռագիրը որ հասած է մեր ձեռքը 9րդ դարէն է (887 թուականէն), երկաթագիր անտարան մըն է: Աւելի հիները կորսուած են:

ՄԵՐ ԶԵՆԱԳԻՐՆԵՐՈՒՄ մօտ կեսը կը գտնուի Երեւանի ձեռագրաց Մատենադարանին մէջ, իսկ միւսները ցրուած են Երուսաղէմի, Վենետիկի, Վիեննայի վանքերուն մէջ եւ այլ վայրեր:

ԿԵՏԱԴՐՈՒԹԵԱՆ արդի նշանները տպագրութեան գիւտէն ետքն է որ զարգացած են:

ՀԱՅ ՏԱՌԵՐԸ միշտ նոյն ձեւով մնացած չեն, այլ անցած ձեւափոխութեան քանի մը շրջաններէ: Գլխաւոր ձեւափոխութիւնները հետեւեալներն են.-

ա) ՄԵՍՐՈՊԵԱՆ ԵՐԿԱԹԱԳԻՐ, գործածուած մինչեւ Թ-Ժ դար: Կը համապատասխանէ մեր այժմեան գլխագիրին:

բ) ՄԻԶԻՆ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԵՐԿԱԹԱԳԻՐ, գործածուած մինչեւ ԺԲ. դար, որմէ ծագած է բոլորագիրը:

գ) ԲՈՆՈՐԱԳԻՐ, գործածուած մինչեւ ԺԴ-ԺԵ դար, կը համապատասխանէ մեր տպագրական պարզ գիրին:

դ) ՆՕՏՐ ԳԻՐ, որ տեւած է մինչեւ ԺԹ դար:

ե) ԾԵՂԱԳԻՐ, որ մեր այժմեան ձեռագիրն է:



ՀԱՅ ԼԵՉՈՒՆ Հայ լեզուն հնդեւրոպական լեզուներու ընտանիքին մէջ առանձին ճիւղ մըն է եւ ունի իւրայատուկ զարգացում: Գերմանացի լեզուաբան Յիւլիան, ֆրանսացի Մէյէ, ապա նաեւ Յրաչեայ Աճառեան հաստատեցին հայ լեզուին հնդեւրոպական ծագումը եւ անկախ ճիւղ մը ըլլալը:

Հայ լեզուն կրած է ազդեցութիւնը Հայաստանի նախաքննիկներու լեզուներուն եւ հետզհետէ իւրացուցած է բազմաթիւ օտար բառեր: Այսպէս, մեր լեզուին մէջ մտած են պահլաւերէն (հին Իրանի լեզուն), պարսկերէն, յունարէն, ասորերէն, արաբերէն, թրքերէն, լատիներէն եւ ֆրանսերէն բառեր:

Գրաւոր հայերէնը անցած է երեք շրջաններէ:–

1) Գրաբար, որ գործածուած է մինչեւ ԺԹ դար:

2) Միջին հայերէն կամ ռամկօրէն, որով բազմաթիւ գրուածքներ կան ԺԱ դարէն սկսեալ մինչեւ ԺԹ դար: Կը կոչուի նաեւ Կիլիկեան հայերէն:

3) Աշխարհաբար, արեւմտահայ եւ արեւելահայ զոյգ բարբառներով: Կը սկսի ԺԹ դարու կեսերէն եւ կը շարունակուի մինչեւ այսօր:

Հայերէն խօսակցական լեզուն սկիզբէն իսկ բաժնուած էր բազմաթիւ բարբառներու:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

Ընթացիկ տարուայ Սեպտեմբերին, Երեւանի մէջ կայացան զանազան միջոցառումներ, որոնք Հայրենիք–Սփիւռք գործակցութեան զարգացման եւ նորանկախ Հայաստանի զօրացման ճանապարհին, վստահօրէն իրենց որոշ բարոյական եւ նիւթական ազդեցութիւնը պիտի ունենան:

* Այդ միջոցառումներէն էին եգիպտահայ վարժարաններու շրջանաւարտներուն հաւաքը, որ տեղի ունեցաւ 12–17 Սեպտեմբերին:

Մոնրեալի Եգիպտահայերու Ընկերակցութեան կազմակերպած այս հաւաքին, աշխարհի զանազան կողմերէն հաւաքուած էին մօտ 500 եգիպտահայեր:

Գրեթէ բոլոր մասնակիցները Մայր Հայրենիքին մէջ հաւաքուելու մտայնացումը հրաշալի գտած էին եւ կազմակերպութիւնը շատ լաւ:

Եգիպտահայ վարժարաններու աշակերտներուն այս հաւաքին առիթով, կազմակերպիչ մարմինը հրատարակած էր բովանդակալից եւ գեղեցիկ Յուշամատեան մը Երեւանի մէջ:

Ինչպէս նախորդ հաւաքները, այս հաւաքը եւս կը մէկտեղէր հաճելի եւ օգտակարը:

* Սուրբ Էջմիածինի Տաճարին կառուցման 1700–ամեակին առիթով 2003 թուականը Յոբելեանական հանդիսութիւններու եւ Ս. Էջմիածին ուխտագնակցութեան տարի հռչակուած էր:

Համաձայն նախապէս առնուած որոշումին, Կիրակի 14 Սեպտեմբերին եգիպտահայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Չաւեն Արք. Չինչինեան, ի

ներկայութեան եգիպտահայ ուխտաւորներու եւ այլոց, Ս. Էջմիածինի Մայր Տաճարին մէջ ուխտի Սուրբ Պատարագ մատուցանեց եւ քարոզեց, որմէ ետք Սրբազան Զօր առաջնորդութեամբ, եգիպտահայերը Վեհարան այցելեցին եւ աջահամբոյրով Ամենայն Հայոց Վեհափառին օրհնութիւնը ընդունեցին:

* Սեպտեմբերի 15–20 Երեւանի մէջ տեղի ունեցաւ նաեւ Հայագիտական Միջազգային Առաջին Համագումարը, կազմակերպուած՝ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային եւ Երեւանի Պետական Համալսարանին համատեղ նախաձեռնութեամբ:

Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Ռոպերթ Զոչարեան եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ. կը հովանաւորէին համագումարը:

Գիտաժողովին բացման պաշտօնական նիւտեն ետք, հայագիտութեան զանազան բնագաւառներու գիտնականներ ելոյթներ ունեցան Հայաստանի Ակադեմիային, Պետական Համալսարանին սրահներուն, եւ Մատենադարին մէջ: Այն ելոյթները, որոնք առընչուած էին հայութիւնը յուզող ներկայի հիմնահարցերուն, առիթ ստեղծեցին զրոյցներու եւ թեր ու դեմ կարծիքներու փոխանակութեան:

Գիտաժողովը առիթը ստեղծեց որ 25 երկիրներէ մասնակցող մօտ 125 օտար եւ հայագի գիտնականներ զիրար ճանչնան եւ լսեն ու հայագիտութեան զարգացման համար նոր ծրագիրներ մշակեն:



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Օ ոստոս 2003–ին, Գահիրեի ՀԲԸՄ–ի «Սաքենիկ ճ. Չա ըր Հիմնադրամ»–ի հրատարակչական ֆոնտին մեկենասութեամբ, Նուպար տպարանէն լոյս տեսաւ Տոքթ. Մուհամէտ Ռէֆա'աթ Էլ–Իմամի «Հայերը Ե իպտոսի Մէջ 1896– 1961» հատորը:

Հրատարակիչ մարմինը ըստ երեւոյթին վերապահութիւններ ունի հատորին մէջ յայտնուած կար · մը տեսակէտներուն մասին, քանի որ հատորին սկիզբը դրած է հետեւեալ պարբերութիւնը՝ «Մոյն իրքին մէջ տեղ տած կարծիքները կը վերաբերին հեղինակին եւ անպայմանօրէն չեն արտայայտեր հրատարակիչին կարծիքը»:

701 էջերէ բաղկացած լանթակագմ եւ 16 x 24 սմ. չափով հատորը հեղինակին տոքթորականի թէգն է: Ան կը բովանդակէ վեց բաժիններ, առաւել՝ յառաջաբանը, վերջաբանը, չորս քարտէսներ եւ օ տա ործուած աղբիւրներու ցանկը:

Առաջին բաժինը յատկացուած է հայկական հարցին զարգացման 1878–1923 եւ ունի երեք ստորաբաժանումներ:

- ա– Օսմանեան հայերը 1461–1909
- բ– Իթթիհատականները եւ հայերը 1909–1918
- գ– Զեմալականները եւ հայերը 1919–1923

Երկրորդ բաժինին մէջ հեղինակը կ'անդրադառնայ հայերուն դէպի Եգիպտոս գաղթին:

Այս բաժնին երեք ստորաբաժանումները կ'ընդգրկեն հետեւեալ նիւթերը:

- ա– Եգիպտոս ապաստանած հայերը 1896–1909
- բ– Փոր Սայիտի հայկական վրանաքաղաքը 1915–1919
- գ– Հայ որբերը Եգիպտոսի մէջ 1923–1927

Երրորդ բաժինը կը պատկերէ հայերու օրինական կարգավիճակը Եգիպտոսի մէջ

- ա– Հայերու տեղաբաշխումը
- բ– Հայերու օրինական դրութիւնը
- գ– Հայերու վարչական օրէնքները
- դ– Օրթոտոքս հայերու անձնական իրաւավիճակը

Չորրորդ բաժինը որ նուիրուած է հայերու տնտեսական գործունեութեան ունի չորս ենթաբաժիններ:

- ա– Ճարտարարուեստ
- բ– Արհեստներ
- գ– Առեւտուր
- դ– Արհեստավարժներ եւ պաշտօններ

Հինգերորդ բաժինը կը խօսի հայերու քաղաքական կեցուածքներուն մասին:

- ա– Եգիպտահայերը եւ հայկական հարցը
- բ– Եգիպտահայերը եւ Խորհրդային Հայաստանը
- գ– Եգիպտահայերու կուսակցական հակամարտութիւնը
- դ– Եգիպտահայերը եւ Եգիպտական քաղաքականութիւնը

Վեցերորդ եւ վերջին բաժինը կ'ընդգրկէ հայերու ընկերային եւ մշակութային գործունեութիւնը:

- ա– Հայկական Միութիւններ
- բ– Մամուլ եւ գրականութիւն
- գ– Թատրոն եւ Շարժանկար
- դ– Երաժշտութիւն եւ երգ
- ե– Գեղարուեստ

1896–1961 երկարող ժամանակաշրջանի Եգիպտահայութեան կեանքին զանազան երեսակները պատկերող արաբերէն լեզուով եզակի այս ստուարածաւալ հրատարակութիւնը, կու գայ հարստացնելու արաբական պատմական գրականութիւնը եւ արաբ ուսումնասիրողին սեղանին կը դնէ արդի Եգիպտոսի պատմութեան ցարդ չուսումնասիրուած մէկ երեսը:

Շնորհակալութեան արժանի աշխատանք եւ հրատարակութիւն:



ԱՆԴԱՄԱԿԱՆ

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Խոր ցառով կ'արձանա ընթաց մահուան ոյժը ՀԲԸՄիության Ե իսպոսի Շրջանակային Յանձնաժողովի նախկին անդամ եւ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ նախկին ատենապետ՝ Գրի որ Շահպետեանի:

Հան ուցեալը տարիներ առաջ իր ընտանիքին հետ փոխադրուած էր ԱՄՆահան մեր, ուր եւ 8 Սեպտեմբեր 2003-ին, ազ ալին աշխոյժ ործունէութեամբ եւ բարի համբառով արժեւորուած իր կեանքը վախճանին հասաւ:

12 Սեպտեմբեր 2003-ին հան ուցեալին յողարկատրութիւնը կատարուեցաւ եւ հայ մարդու մը մարմինը եւս յանձնուեցաւ Գալիֆորնիոյ ցուրտ հողին:

Խորապէս կը ցաւակցինք հանգուցեալին այրիին՝ Տիկին Սօֆիի, զաւակներուն, թոռներուն եւ հարազատներուն:

Հանգուցեալին բարի համբաւը թող միսիթարուրթիւն պարգեւէ իր հարազատներուն:
Թող աղօթքն ու ողբացեալին բարի յիշատակը միսիթարեն անոր հարազատները:

Խոր ցառով իմացանք Սիրան Թաշճեանի մահը, մայրը Գահիրէի ՀԲԸՄիության երիտասարդ անդամներէն Ռոպէր Թաշճեանի, որ տեղի ունեցաւ 20 Հոկտեմբեր 2003-ի երեկոյեան:

Խորապէս կը ցաւակցինք հանգուցեալին հարազատներուն:
Թող աղօթքն ու ողբացեալին բարի յիշատակը միսիթարեն անոր հարազատները:



